ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳԵՏԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

---

N 001

« 13 » հունվարի 2021թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Գետաշենի համայնքի 2021թ. բյուջեն հաստատված ավագանու 2021 թ. հունվարի 11-ի թիվ 03-Ն որոշմամբ:

Առդիր 95 թերթ:

Գետաշենի գյուղական համայնքի
ղեկավար Գ. Հովհաննիսյան

4402911

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ Մ-00576-2021
15 01 2021 թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Գետաշեն համայնք, Հրապարակ 1,
Հեռախոս 093 16 94 64
getashen.armavir@mta.gov.am

«11» հունվարի 2021 թվականի N 03 - Ն

## ՈՐՈՇՈՒՄ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 83-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածով և 33-րդ հոդվածի 3-րդ մասով՝

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գետաշեն համայնքի 2021 թվականի բյուջեն՝ եկամուտների գծով 71251,7 հազար դրամ, ծախսերի գծով՝ 71251,7 հազար դրամ, դեֆիցիտը /պակասուրդը/ 0.0 հազար դրամ՝ համաձայն հավելվածների:

1/ Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հավելված 1-ի:

2/ Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման՝ համաձայն հավելված 2-ի:

3 /Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հավելված 3-ի:

4/ Հաստատել համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը /պակասուրդը/՝ համաձայն հավելված 4-ի:

5/ Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի /պակասուրդի/ ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ համաձայն հավելված 5-ի:

6/ Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հավելված 6-ի:

2. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարել վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև:

3. Սահմանել, որ փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել չափաքանակների 30տոկոսը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

*կողմ ( )  Դեմ ( )  Ձեռնպահ ( )*

*ավագանու անդամներ՝*

*Վ. Խաչատրյան*

*Մն. Մուրադյան*

*Հ. Դավթյան*

*Մ. Մուրադյան*

*Համայնքի ղեկավար՝*  *Հովհաննիսյան Գ.*

*2021 թվականի հունվարի 11*

*գ. Գետաշեն*

*ժամը 13 30*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, Վազգեն Սարգսյան 3/8 , հեռ. 594015
Էլ. Փոստ suren.galstyan@justice.am

№ 27.3/29430-20
«25» 12 2020թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՇԵՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հովհաննիսյան

Ի պատասխան Ձեր 2020 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 331 գրության՝ կից ներկայացվում է «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գետաշեն համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

12/25/2020

X

Suren Galstyan

ՍՈՒՐԵՆ ԳԱԼՍՏՅԱՆ

Կատարող՝ Անահիտ Գևորգյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն,
Հեռ. (010) 594-116

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գետաշեն համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ**

1. «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գետաշեն համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) նախաբանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 6-րդ հոդվածին հղում կատարելու անհրաժեշտություն չկա:

2.Նախագծի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ կետերում հիշատակված թիվ 1, 2, 3, 4, 5 և 6 հատվածներն անհրաժեշտ է ձևակերպել հավելվածի /հավելվածների/ տեսքով:

3. Նախագծի կետերի համարակալումն անհրաժեշտ է վերանայել, մասնավորապես՝ 9-րդ կետին հաջորդում է 2-րդ կետը:

4.Նախագծի 2-րդ կետն անհրաժեշտ է խմբագրել, մասնավորապես՝ ակտի գործողության ժամկետն անհրաժեշտ է նախատեսել 2021 թվականի հունվարի 1-ից:

5.Նախագծի հավելվածի գլխագիրը բացակայում է:

6. Հարկ ենք համարում նշել նաև, որ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասի բովանդակությունից պարզ է դառնում, որ համայնքի բյուջեի նախագիծը բաղկացած է համայնքի բյուջեի մասին ավագանու որոշման նախագծից և համայնքի ղեկավարի բյուջետային ուղերձից: Ուստի, տվյալ դեպքում Նախագծին կից անհրաժեշտ է ներկայացնել նաև բյուջետային ուղերձը:

Միաժամանակ հայտնում ենք, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ փորձաքննության ներկայացվող նորմատիվ իրավական ակտին կցվող հիմնավորման մեջ շարադրվում են կարգավորման ենթակա ոլորտի կամ խնդրի սահմանումը, առկա իրավիճակը (եթե կիրառելի է), կարգավորման նպատակները, ակնկալվող արդյունքը, ակտի նորմատիվ բնույթի հիմնավորվածությունը:

Վերոգրյալ կարգավորումների համադրված և բովանդակային վերլուծությունից պարզ դառնում, որ փորձաքննության ներկայացվող նորմատիվ իրավական ակտին կցվո հիմնավորման մեջ պարտադիր պետք է շարադրվեն կարգավորման ենթակա ոլորտի կա խնդրի սահմանումը, առկա իրավիճակը, կարգավորման նպատակները, ակնկալվո արդյունքը, ակտի նորմատիվ բնույթի հիմնավորվածությունը: Այնինչ, տվյալ պարագայու Նախագծին կից ներկայացված հիմնավորումը թերի է, չի արտացոլում ակտի ընդունման անհրաժեշտությունը և էությունը:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ Նախագծի հիմնավորումն անհրաժեշտ է լրամշակել:

Իրավական ակտերի փորձաքննության
գործակալության պետ՝

12/25/2020

X

Emil Margaryan

Signed by: MARGARYAN EMIL 4014910245

ԷՄԻԼ ՄԱՐԳԱՐՅԱՆ

# ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գետաշեն համայնքի «2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ փորձագիտական եզրակացության

| N | ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՐԺԱՆԱԳՐԱԾ ՄԱՐՄՆԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԴԻՏՈՂՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ | ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐԺԱՆԱԳՐՎԱԾ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՃՇԳԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ |
|---|---|---|---|
| 1. | Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն | Նախագծի նախաբանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 6-րդ հոդվածին հղում կատարելու անհրաժեշտություն չկա : | Հղումը 6-րդ հոդվածին հեռացվել է: |
| 2. | Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն | Անհրաժեշտ է նախագծի հատվածները ձևակերպել հավելվածի /հավելվածների/ տեսքով: | Կատարվել է ուղղում: |
| 3. | Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն | Նախագծի կետեր համարակալումն անհրաժեշտ է վերանայել: | Կատարվել է ուղղում: |
| 4. | Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն | Ակտի գործողության ժամկետն անհրաժեշտ է նախատեսել 2021թ. հունվարի 1-ից: | Կատարվել է ուղղում: |
| 5. | Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն | Նախագծի հավելվածի գլխագիրը բացակայում է | Կատարվել է ուղղում: |
| 6. | Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն | Նախագծին կից անհրաժեշտ է ներկայացնել նաև համայնքի ղեկավարի բյուջետային ուղերձը: | «ՀՀ բյուջետային համակարգի մասին օրենքի» 31-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն ավելացվել է համայնքի ղեկավարի բյուջետային ուղերձը: |
| 7. | Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն | Նախագծի հիմնավորումն անհրաժեշտ է լրամշակել: | Կատարվել է ուղղում: |

*Գետաշեն համայնքի ղեկավար* *Գ. Հովհաննիսյան*

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» «11» «ՀՈՒՆՎԱՐԻ» 2021 ԹՎԱԿԱՆԻ N 03 -Ն ՈՐՈՇՄԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գետաշեն համայնքի ավագանու 2021 թվականի «11» «հունվարի»-ի « Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գետաշեն համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին » թիվ 03 -Ն որոշման ընդունումը պայմանավորված է «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետի պահանջով, և դրա անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ այն ուղղված է համայնքի զարգացման նպատակում՝ բյուջետային համակարգի միասնականությունն ապահովող բյուջետային գործընթացի կազմակերպման համաձայնեցված սկզբունքների, բյուջետային դասակարգման, հաշվառման և հաշվետվության միասնական մեթոդաբանության հիման վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գետաշենի գյուղական համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 11-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գետաշենի գյուղական համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 03-Ն որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն չկա:

Գետաշենի գյուղական համայնքի
ղեկավար` Գ. Հովհաննիսյան

## ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գույքահարկի և հողի հարկի, հողերի և այլ գույքի վարձակալության վարձավճարների գծով առանձին ցուցանիշների վերաբերյալ

/հազար դրամով/

| NN | Եկամտատեսակները | ապառքը տարեսկզբի դրությամբ 01.01.2020 | ապառքը տարեվերջի դրությամբ 01.10.2020 | տվյալ տարվա հաշվարկային գումարը 01.10.2020 |
|---|---|---|---|---|
| 1 | Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար | 1271,3 | 1422,1 | 151,2 |
| 2 | Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողերի համար | 83601,8 | 95621,5 | 14962,4 |
| 3 | Գույքահարկ փոխադրամիջոցների համար | 7374,4 | 14282,6 | 10571,6 |
| 4 | Հողերի վարձակալության վարձավճարներ | 6564 | 7304,4 | 2489,0 |
| 5 | Այլ գույքի վարձակալության վարձավճարներ | 631,6 | 881,2 | 909,6 |

Գետաշենի համայնքի ղեկավար՝ Գ. Յովհաննիսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՈՒՂԵՐՁԸ

Ձեզ եմ ներկայացնում 2021 թվականի բյուջետային ուղերձը ուղերձը:

Համայնքի գործունեությունը մեծապես կախված է բյուջետային գործընթացի լավ կազմակերպումից, եկամուտների արդյունավետ հավաքագրումից և միջոցների արդյունավետ օգտագործումից: Բյուջեի կազմման և կատարման ժամանակ համայնքն իր առջև դրել է հետևյալ նպատակները՝

ա/ Բարելավել համայնքի ֆինանսական վիճակը՝ բարձրացնելով եկամուտների հավաքագրման մակարդակը:

բ/ Բարձրացնել բնակչությանը մատուցվող ծառայությունների մակարդակը և որակը:

գ/ Պետական բյուջեից համայնքին տրամադրվող դոտացիան հիմնականում պետք է ուղղել համայնքի սոցիալ տնտեսական զարգացմանը:

Ձեզ եմ ներկայացնում 2021 թվականի եկամուտների հիմնավորումը ըստ առանձին եկամտատեսակների՝

| N | անվանումը | 2021թ. |
|---|---|---|
| | | նախատեսվող |
| 1 | Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար | 14962,4 |
| 2 | Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար | 151,2 |
| 3 | Գույքահարկ փոխադրամիջոցների համար | 10571,6 |
| 4 | Համայնքի սեփականություն համարվող գույքի և հողերի վարձավճարներ | 3398,6 |
| 5 | Տեղական վճարներ | 1560,0 |
| 6 | Տեղական տուրք | 148,8 |
| 7 | Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | 39959,1 |
| 8 | Ծառայություններից գանձվող գումարներ | 500,0 |
| | Ընդամենը | 71251,7 |

2021թ. բյուջեում սեփական եկամուտների կանխատեսման համար հիմք են հանդիսացել նախորդ տարիների մուտքերի կատարման վերլուծությունը, ինչպես նաև բյուջետային տարվա հարկային եկամուտների ելակետային տվյալները:

Ծախսերի վերծանումը ըստ գործառնական դասակարգման՝

| N | Անվանումը | 2021թ. |
|---|---|---|
| | | նախատեսվող |
| 1 | Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում | 32250,0 |
| 2 | Ընդհանուր բնույթի այլ ծառայություն | 50,0 |
| 3 | Ընդհանուր բնույթի հանրային ծառ. (այլ դասերին չպատկանող) | 5400,0 |
| 4 | Գյուղատնտեսություն | 0,0 |
| 5 | Ճանապարհային տրանսպորտ | |
| 6 | Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող) | 0,0 |
| 7 | Աղբահանում | 1560,0 |
| 8 | Ջրամատակարարում | 14100,0 |
| 9 | Փողոցների լուսավորում | 500,0 |
| 10 | Հանգիստ, մշակույթ և կրոն | 9187,0 |
| 11 | Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) | 4800,0 |
| 12 | ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ | 3404,7 |
| | Ընդամենը | 71251,7 |

Ծախսերի վերծանումը ըստ տնտեսագիտական դասակարգման

| N | Անվանումը | հոդված | 2021թ. |
|---|---|---|---|
| | | | նախատեսվող |
| 1 | Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 4111 | 32287,0 |
| 2 | էներգետիկ ծառայություն | 4212 | 13600,0 |
| 3 | Կոմունալ ծառայություն | 4213 | 1560,0 |
| 4 | Կապի Ծառայություն | 4214 | 400,0 |
| 5 | Ապահովագրական ծախսեր | 4215 | 100,0 |
| 6 | Ներքին գործուղումներ | 4221 | 200,0 |
| 7 | Համակարգչային ծառայություններ | 4232 | 250,0 |
| 8 | Աշխատակազմի մասն. Զարգացմ. Ծառայ. | 4233 | 50,0 |
| 9 | Տեղեկատվական ծառայություն | 4234 | 300,0 |
| 10 | Ներկայացուցչական ծախսեր | 4237 | 0,0 |
| 11 | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 4239 | 2600,0 |
| 12 | Մասնագիտական ծառայություններ | 4241 | 700,0 |
| 13 | Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում | 4251 | 1950,0 |
| 14 | Մեքենաների և սարք. ընթացիկ նորոգում և պահպանում | 4252 | 1450,0 |
| 15 | Գրասենյակային նյութեր և հագուստ | 4261 | 900,0 |
| 16 | Վերապատրաստման և ուսուցման նյութեր | 4263 | 300,0 |
| 17 | Տրանսպորտային նյութեր | 4264 | 500,0 |
| 18 | Կենցաղային և հանրային սննդի նյութեր | 4267 | 700,0 |
| 19 | Հատուկ նպատակային այլ նյութեր | 4269 | 3100,0 |
| 20 | Այլ կապիտալ դրամաշնորհներ | 4657 | 0,0 |
| 21 | Այլ նպաստներ բյուջեից | 4729 | 4500,0 |
| 22 | Նվիրատվություն | 4819 | 300,0 |
| 23 | Պարտադիր վճարներ | 4823 | 300,0 |
| 24 | Բնական աղետներից առաջացած վնասվածքների կամ վնասների վերականգնում | 4841 | 1800,0 |

| | | | |
|---|---|---|---|
| 25 | Պահուստային միջոցներ | 4891 | 3404,7 |
| 26 | Շենքերի և շինությունների կառուցում | 5112 | 0,0 |
| 27 | Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | 0,0 |
| 28 | Վարչական սարքավորումներ | 5122 | 0,0 |
| 29 | Ոչ նյութական հիմնական միջոցներ | 5132 | 0,0 |
| 30 | Նախագծահետազոտական ծախսեր | 5134 | 0,0 |
| 31 | Հողի իրացումից մուտքեր | 8411 | 0 |
| | Ընդամենը | | 71251,7 |

Ես դիմում եմ համայնքի բնակչությանը, ավագանուն՝ չահագրգիռ մոտեցում ցուցաբերել համայնքի 2021 թվականի բյուջեի միջոցների գոյացման և նպատակային ծախսման ուղղությամբ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ

### Բյուջեի եկամուտների համեմատական վերլուծությունը

հազար դրամ

| N | անվանումը | 2019թ | 2020թ | 2021թ. |
|---|---|---|---|---|
| | | փաստացի | հաստատված | նախատեսվող |
| 1 | Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար | 13 328,6 | 11519,0 | 14962,4 |
| 2 | Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար | 40,4 | 151,2 | 151,2 |
| 3 | Գույքահարկ փոխադրամիջոցների համար | 7881,8 | 8465,9 | 10571,6 |
| 4 | Համայնքի սեփականություն համարվող գույքի և հողերի վարձավճարներ | 1899,3 | 2965,8 | 3398,6 |
| 5 | Տեղական վճարներ | 383,7 | 60,0 | 1560,0 |
| 6 | Տեղական տուրք | 115,3 | 100,0 | 148,8 |
| 7 | Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | 34936,3 | 36651,9 | 39959,1 |
| 8 | Ծառայություններից գանձվող գումարներ | 192,1 | 500,0 | 500,0 |
| | Ընդամենը | 58777,5 | 60413,8 | 71251,7 |

### Համայնքի բյուջեի ծախսերի համեմատական վերլուծությունը ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման

հազար դրամ

| N | Անվանումը | 2019թ. | 2020թ. | 2021թ. |
|---|---|---|---|---|
| | | փաստացի | հաստատված | նախատեսվող |
| 1 | Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում | 23435,8 | 34519,7 | 32250,0 |
| 2 | Ընդհանուր բնույթի այլ ծառայություն | 344,8 | 50,0 | 50,0 |
| 3 | Ընդհանուր բնույթի հանրային ծառ. (այլ դասերին չպատկանող) | 2636,7 | 2929,0 | 5400,0 |
| 4 | Գյուղատնտեսություն | 3291,0 | 3291,05 | 0,0 |
| 5 | Ճանապարհային տրանսպորտ | | | |
| 6 | Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող) | -583,0 | 0,0 | 0,0 |
| 7 | Աղբահանում | 1560,0 | 1560,0 | 1560,0 |
| 8 | Ջրամատակարարում | 16242,0 | 13453,0 | 14100,0 |
| 9 | Փողոցների լուսավորում | 0,0 | 900,0 | 500,0 |
| 10 | Հանգիստ. մշակույթ և կրոն | 4671,2 | 6095,0 | 9187,0 |
| 11 | Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) | 3250,0 | 5800,0 | 4800,0 |
| 12 | ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ | 0,0 | 1911,8 | 3404,7 |
| | Ընդամենը | 54848,5 | 70509,5 | 71251,7 |

Համայնքի բյուջեի ծախսերի՝ համեմատական վերլուծությունը ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման

հազար դրամ

| N | Անվանումը | հոդված | 2019թ. փաստացի | 2020թ հաստատված | 2021թ. նախատեսվող |
|---|---|---|---|---|---|
| 1 | Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 4111 | 24653,2 | 26052,0 | 32287,0 |
| 2 | Էներգետիկ ծառայություն | 4212 | 10912,8 | 12 876,0 | 13600,0 |
| 3 | Կոմունալ ծառայություն | 4213 | 1560,0 | 1560,0 | 1560,0 |
| 4 | Կապի Ծառայություն | 4214 | 339,8 | 428,0 | 400,0 |
| 5 | Ապահովագրական ծախսեր | 4215 | 46,0 | 100,0 | 100,0 |
| 6 | Ներքին գործուղումներ | 4221 | 97,5 | 200,0 | 200,0 |
| 7 | Համակարգչային ծառայություններ | 4232 | 106,8 | 230,0 | 250,0 |
| 8 | Աշխատակազմի մասն. Զարգացմ. Ծառայ. | 4233 | 0,0 | 50,0 | 50,0 |
| 9 | Տեղեկատվական ծառայություն | 4234 | 48,0 | 300,0 | 300,0 |
| 10 | Ներկայացուցչական ծախսեր | 4237 | 0,0 | 0,0 | 0,0 |
| 11 | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 4239 | 986,3 | 2060,0 | 2600,0 |
| 12 | Մասնագիտական ծառայություններ | 4241 | 369,0 | 500,0 | 700,0 |
| 13 | Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում | 4251 | 0,0 | 2250,0 | 1950,0 |
| 14 | Մեքենաների և սարք. ընթացիկ նորոգում և պահպանում | 4252 | 1398,0 | 1550,0 | 1450,0 |
| 15 | Գրասենյակային նյութեր և հագուստ | 4261 | 453,7 | 900,0 | 900,0 |
| 16 | Վերապատրաստման և ուսուցման նյութեր | 4263 | 0,0 | 300,0 | 300,0 |
| 17 | Տրանսպորտային նյութեր | 4264 | 400,0 | 500,0 | 500,0 |
| 18 | Կենցաղային և հանրային սննդի նյութեր | 4267 | 40,3 | 250,0 | 700,0 |
| 19 | Հատուկ նպատակային այլ նյութեր | 4269 | 409,0 | 3300,0 | 3100,0 |
| 20 | Այլ կապիտալ դրամաշնորհներ | 4657 | 8291,0 | 3291,05 | 0,0 |
| 21 | Այլ նպաստներ բյուջեից | 4729 | 2950,0 | 5500,0 | 4500,0 |
| 22 | Նվիրատվություն | 4819 | 300,0 | 300,0 | 300,0 |
| 23 | Պարտադիր վճարներ | 4823 | 185,9 | 400,0 | 300,0 |
| 24 | Բնական աղետներից առաջացած վնասվածքների կամ վնասների վերականգնում | 4841 | 0,0 | 0,0 | 1800,0 |
| 25 | Պահուստային միջոցներ | 4891 | 0,0 | 1911,8 | 3404,7 |
| 26 | Շենքերի և շինությունների կառուցում | 5112 | 0,0 | 0,0 | 0,0 |
| 27 | Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | 0,0 | 4100,7 | 0,0 |
| 28 | Վարչական սարքավորումներ | 5122 | 446,0 | 500,0 | 0,0 |
| 29 | Ոչ նյութական հիմնական միջոցներ | 5132 | 298,0 | 200,0 | 0,0 |
| 30 | Նախագծահետազոտական ծախսեր | 5134 | 1140,0 | 900,0 | 0,0 |
| 31 | Հողի իրացումից մուտքեր | 8411 | -583,0 | 0,0 | 0 |
| | Ընդամենը | | 54848,5 | 70509,5 | 71251,7 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, Վազգեն Սարգսյան 3/8 , հեռ. 594015

էլ. Փոստ suren.galstyan@justice.am

N 06/27.1/26533-20

«10» 12 2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՇԵՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ՊԱՐՈՆ Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ավետիսյան

Ի պատասխան Ձեր 2020 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 101 գրության՝ կից ներկայացվում է «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գետաշեն համայնքի վարչական տարածքում 2021 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ

12/9/2020

X

Suren Galstyan

ՍՈՒՐԵՆ ԳԱԼՍՏՅԱՆ

Կատարող՝ Լյուդմիլա Մելքոնյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության վարչություն
Հեռ. /010/ 59 41 18

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գետաշեն համայնքի վարչական տարածքում 2021 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ**

1. Նախագծի առաջին էջի վերևի աջ անկյունում անհրաժեշտ է գրել «ՆԱԽԱԳԻԾ» բառը՝ համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջների

2. Նախագծի անվանումից անհրաժեշտ է հանել «18» նոյեմբերի» թիվը և բառը:

3. Նախագծի անվանումից անհրաժեշտ է հանել «24» թիվը:

4. Նախագծի անվանումից անհրաժեշտ է հանել «Գետաշեն համայնք» բառերը:

5. Նախագծի նախաբանում անհրաժեշտ է հղում կատարել նաև համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետին՝ համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների:

6. Նախագծի նախաբանից անհրաժեշտ է հանել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասին» կատարված հղումը, քանի որ հիշյալ հղումը տվյալ նախագծին վերաբերելի չէ:

7. Նախագծով հաստատվող հավելվածում «ՀԱՎԵԼՎԱԾ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գետաշեն համայնքի ավագանու 2020 թվականի նոյեմբերի 18-ի N 24-Ն որոշման նախագիծ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «ՀԱՎԵԼՎԱԾ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գետաշեն համայնքի ավագանու 2020 թվականի--------------ի թիվ--------Ն որոշման» բառերով:

8. Նախագծի հիմնավորման վերաբերյալ հայտնում ենք հետևյալը՝

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *նորմատիվ իրավական ակտի նախագիծը հիմնավորման հետ մեկտեղ փորձաքննության են ուղարկում համապատասխան ակտն ընդունելու իրավասություն ունեցող մարմինը կամ Կառավարության անդամը, ինչպես նաև Կառավարությանը և վարչապետին ենթակա մարմինները:*

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *փորձաքննության ներկայացվող նորմատիվ իրավական ակտին կցվող հիմնավորման մեջ շարադրվում են կարգավորման ենթակա ոլորտի կամ խնդրի սահմանումը, առկա իրավիճակը (եթե կիրառելի է), կարգավորման նպատակները, ակնկալվող արդյունքը, ակտի նորմատիվ բնույթի հիմնավորվածությունը:*

Վերոգրյալ կարգավորումների համադրված և բովանդակային վերլուծությունից պարզ է դառնում, որ փորձաքննության ներկայացվող նորմատիվ իրավական ակտին կցվող հիմնավորման մեջ պարտադիր պետք է շարադրվեն կարգավորման ենթակա ոլորտի կամ խնդրի սահմանումը, առկա իրավիճակը, կարգավորման նպատակները, ակնկալվող արդյունքը, ակտի նորմատիվ բնույթի հիմնավորվածությունը, մինչդեռ տվյալ դեպքում նախագծի հիմնավորումը թերի և չի արտացոլում նախագծի ընդունման նպատակը և իրավաչափությունը:

**Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն**

*ԱՄՓՈՓԱԹԵՐԹ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2021 Թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ

| N | ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՐՁԱՆԱԳՐԱԾ ՄԱՐՄՆԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԴԻՏՈՂՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ | ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՇՏԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ |
|---|---|---|---|
| 1 | Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն | Նախագծի առաջին էջի վերևի աջ անկյունում անհրաժեշտ է գրել <<ՆԱԽԱԳԻԾ>> բառը՝ համաձայն <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 21-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջների: | Հիմք ընդունելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 21-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջների՝ կատարվել է ուղղում |
| 2 | Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն | Նախագծի անվանումից անհրաժեշտ է հանել <<18>> նոյեմբերի թիվը և բառը: | Հիմք ընդունելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 21-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջների՝ կատարվել է ուղղում |
| 3 | Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն | Նախագծի անվանումից անհրաժեշտ է հանել <<24>> թիվը | Հիմք ընդունելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 21-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջների՝ կատարվել է ուղղում |
| 4 | Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն | Նախագծի անվանումից անհրաժեշտ է հանել <<Գետաշեն համայնք>>բառերը | Հիմք ընդունելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 21-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջների՝ կատարվել է ուղղում |

| | | | |
|---|---|---|---|
| 5 | Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն | Նախագծի նախաբանում անհրաժեշտ է հղում կատարել նաև համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետին՝ համաձայն <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների: | Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետին՝ համաձայն <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների՝ կատարվել է ուղղում |
| 6 | Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն | Նախագծի նախաբանից անհրաժեշտ է հանել <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասին>> կատարած հղումը, քանի որ հիշյալ հղումը տվյալ նախագծին վերաբերելի չէ: | Հիմք ընդունելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասը>> կատարվել է ուղղում: |
| 7 | Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն | Նախագծով հաստատվող հավելվածում <<ՀԱՎԵԼՎԱԾ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գետաշեն համայնքի ավագանում 2020 թվականի նոյեմբերի 18-ի N 24-Ն որոշման նախագծի>> բառերն անհրաժեշտ է փոխարինել <<ՀԱՎԵԼՎԱԾ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գետաշեն համայնքի ավագանում 2020 թվականի ----ի N ---Ն որոշման>> բառերով: | Հիմք ընդունելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասը>> կատարվել է ուղղում: |

*Գետաշեն համայնքի ղեկավար* *Գ. Հովհաննիսյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

*14 դեկտեմբերի 2020 թ.* N 25

## ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական Ինքնակառավարման Մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Գետաշեն համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը սահմանել 290000 երկու հարյուր իննսուն հազար/ ՀՀ դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թ. հունվարի 1-ից:

| *Ավագանու անդամներ* | **Կողմ (4)** | **Դեմ ( )** | **Ձեռնպահ ( )** |
|---|---|---|---|
| *Վ.Խաչատրյան* | | | |
| *Հ. Դավթյան* | | | |
| *Մ. Մուրադյան* | | | |
| *Մն. Մուրադյան* | | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Գ. Հովհաննիսյան**

(Կ. Տ.)

2020 թվականի դեկտեմբերի 14
Գ.Գետաշեն
Ժամը 16:30

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

---

*14 դեկտեմբերի 2020 թ.* **N 26**

# ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Ղեկավարվելով "Տեղական Ինքնակառավարման Մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Գետաշենի համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնական դրույքաչափերը 2021 թվականի համար համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021թ. հունվարի 1-ից:

| *Ավագանու անդամներ* | **Կողմ (4)** | **Դեմ ( )** | **Ձեռնպահ ( )** |
|---|---|---|---|
| *Վ.Խաչատրյան* | | | |
| *Հ. Դավթյան* | | | |
| *Մ. Մուրադյան* | | | |
| *Մն. Մուրադյան* | | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Գ. Հովհաննիսյան**

(Կ. Տ.)

2019 թվականի դեկտեմբերի 14

Գ.Գետաշեն

Ժամը 16:30

Հավելված
Գետաշեն համայնքի 14.12.2020թ.
N10 ավագանու N 26 որոշման

ԳԵՏԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 17:
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| հ/հ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | Հաստիքային միավորը | Պաշտոնի դրույքաչափը |
|---|---|---|---|
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 290.000 |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 190.000 |
| | ԱՇԽԱՏԱԿԱԶՄ | | |
| 1 | Աշխատակազմի քարտուղար | 1 | 190.000 |
| 2 | Առաջատար մասնագետ | 1 | 185.000 |
| 3 | Առաջատար մասնագետ | 1 | 185.000 |
| 4 | Առաջին կարգի մասնագետ | 1 | 140.000 |
| 5 | Առաջին կարգի մասնագետ | 1 | 140.000 |
| 6 | երկրորդ կարգի մասնագետ | 1 | 130.000 |
| 7 | երկրորդ կարգի մասնագետ | 1 | 130.000 |
| | ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ | | |
| 1 | Հավաքարար | 1 | 95.500 |
| 2 | Գործավարուհի | 1 | 110.000 |
| 3 | Հակակարկտային կայանների պահակ | 1 | 102.000 |
| 4 | Անասնաբույժ | 1 | 95.500 |
| | Մշակույթի տուն | | |
| 1 | Մշակույթի տան տնօրեն | 1 | 96.000 |
| 2 | Մշ.տան այգեպան | 1 | 95.500 |
| 3 | Գրադարանի վարիչ | 1 | 95.500 |
| 4 | Գեղմասվար | 1 | 95.500 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ՝ | | 2365.500 |

Գետաշեն համայնքի ղեկավար՝ Գ. Հովհաննիսյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

(մարզի անվանումը)

ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ

(քաղաքային, գյուղական, թաղային համայնքի անվանումը)

# 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵ

Հաստատված է ԳԵՏԱՇԵՆ համայնքի ավագանու

(քաղաքային, գյուղական, թաղային համայնքի անվանումը)

11 հունվարի 2021 թ. թիվ 03 -Ն որոշմամբ

(ամիսը, ամսաթիվը)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ԱՐԿԱԴԻԱՅԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

(անունը, հայրանունը, ազգանունը)